ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2016 թվականի N 523 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. ԱՄՆ Սիլիկոնյան հովտում, «Սինոփսիս»-ի Մաունթին Վյու կամպուսում «ԱրմԹեք» գլոբալ ամենամյա համաժողովի շրջանակում տեղի ունենալիք «Հայաստանի ՏՏ ֆորում»-ին և Լոս Անջելեսում կայանալիք գործարար համաժողովին մասնակցելու նպատակով 2016 թվականի հունիսի 8-14-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Սան Ֆրանցիսկո և Լոս Անջելես) պատվիրակության անդամների՝ համաձայն հավելվածի, գործուղման հետ կապված ծախսերը կատարել.

Արծվիկ Մինասյանինը, Էմիլ Տարասյանինը և Արմեն Այվազյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Ընդունել ի գիտություն, որ Կարէն Մկրտիչեանի Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Սան Ֆրանցիսկո և Լոս Անջելես) գործուղման հետ կապված ծախսերը կատարվել են Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. հունիսի 21
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
հունիսի 21-ի N 523 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-14-Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՄԵԿՆԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ա. Մինասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար (պատվիրակության ղեկավար)

Է. Տարասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Այվազյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության վարչության պետ

Կ. Մկրտիչեան - Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (10.06.-14.06.2016թ. համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ